2023 – 2024

ուստարվա աշխատանքային պլան

տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալ

Սաթիկ Սեյրանյան

2023 - 2024 ուստարվա հիմնական նպատակն է՝
▪հանրակրթական ծրագրերի բովանդակության հիման վրա կրթության որակի շարունակական բարելավումն ու սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների զարգացումը.
▪մտագործունեության տարբեր տեսակներին տիրապետող, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կատարելատիպին ձգտող շրջապատի ձևավորումը.
▪մանկավարժական տեխնոլոգիաների, մեթոդների շարունակական կատարելագործումը.
▪ ներառական կրթության արդյունավետ իրագործումը.
▪ **ՆՁՓ-ի համապատասխան գործնեության ապահովումը**:

Դպրոցի՝ 2023-2024 ուստարվա մեթոդաբանությունն է՝ ՏՀՏ-ի միջոցների կիրառումը և վերջնարդյունքի ապահովումը որպես դասի արդյունավետության բարձրացման կարևոր և անհրաժեշտ պայման:

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

2022-2023 ուստարվա սկզբին դպրոցի աշակերտների թիվը 976 էր: Ուստարվա ընթացքում դպրոցից հեռացել է 19 աշակերտ, դպրոց ընդունվել՝ 27-ը: Աշակերտների թիվը ուստարվա վերջին 984 է:984 աշակերտից գերազանցիկ են 210-ը: Իններորդ դասարանն ավարտած 102 աշակերտից 17-ը ստացել է հատուկ նմուշի վկայական:

Դպրոցի աշակերտների թվի աճը պայմանավորված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բարձր մակարդակով և արհեստավարժ, ճիշտ և նպատակային դպրոցավարությամբ:

Սեպտեմբերի 1-ից դպրոցում կոմպլեկտավորվել էր 32 դասարան. աշակերտների միջին խտությունը դասարանում 30 է:

2022-2023 ոստարում դպրոցի ուսուցիչների մի ստվար մասը մասնակցել է տարբեր ծրագրերի, դասընթացների, սեմինարների և ստացել վկայագրեր, հավաստագրեր, գովասանագրեր:

2022-2023 ոստարում դպրոցը իրականացրել է ներառական կրթության ապահովման ուղղված տարբեաշխատանքներ և միջոցառումներ:

Դպրոցի ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը ավելացել է մեկ աշակերտով (4 աշակերտ):

Ուստարում ուսումնական գործընթացը էլ ավելի զարգացնելու, դասաժամերն ավելի որակյալ և ժամանակակից պահանջներին համապատասխանացնելու նպատակով դպրոցում խիստ ուշադրություն է դարձվել դասապրոցեսներին ՏՀՏ-ի միջոցների օգտագործմանը, համակարգչային կաբինետներում (դպրոցում գործում է երկու համակարգչային կաբինետ) բոլոր առարկաներից դասաժամերի

անցկացմանը, առցանց պարապմունքներին: 2022 թ. սեպտեմբերից մինչև 2023թ. մայիսի 26-ը ներառյալ համակարգչային կաբինետներում պարապվել է 480 դասաժամ: Ուսումնասիրվել է Մաթեմատիկա (I – VI դդ), Հայոց պատմություն (VI – IXդդ,) Քիմիա (VII – IX դդ), անգլերեն (VIII-IX դդ.),Երաժշտություն (I – V դդ), Գրականություն (VII – IX դդ),Շախմատ (II – IV դդ) առարկաների դասավանդման վիճակը: Տնօրենության կողմից մինչև մայիսի 26-ը տրվել են 93 գրավոր աշխատանքներ , որոնց միջոցով ստուգվել են ոչ միայն առարկայի դասավանդման վիճակը, այլ նաև աշակերտների գիտելիքներն ու կարողությունները, օրվա դասի պատրաստականությունը, ինչպես նաև տնօրենության կողմից իրականացվել է վերահսկողություն:

2022-2023 ուստարվա առարկայական օլիմպիադայի առաջին՝ դպրոցական փուլին մասնակցել են մոտ 405 աշակերտներ, տարածքային փուլին՝ 87 , մարզային՝ 45, հանրապետական փուլ են անցել 3 աշակերտներ(քիմիա, աշխարհագրություն, ռուսաց լեզու):

Դպրոցի աշակերտները, ինչպես միշտ, այս տարի ևս մասնակցել են ,Русский медвеженок, Կենգուրու միջազգային և «Մեղու» հայերենը բոլորի համար համահայկական մրցույթներին: Այս ուստարում ևս դպրոցի աշակերտները մասնակցել են ֆրանսերենի իմացության ,,Ոսկի աքաղաղ,, մրցույթին:

,Ռոբոտաշինությունը սկսվում է դպրոցից ծրագրի շրջանակներում գործել է նաև ռոբոտաշինության խմբակը, որում ընդգրկված են 25 աշակերտներ:

Ուստարվա ընթացքում դպրոցում տարբեր նպատակներով կատարվել են բազմաթիվ դասալսումներ:

Դպրոցում շարունակական է դարձել «Տաք սնունդ» ազգային ծրագիրը: 2022-2023 ուստարում այդ ծրագրից օգտվել են 440 աշակերտներ:

Այս ուստարում, բացի վերոնշյալից, դպրոցն ունեցել է նաև այլ ձեռքբերումներ, հաջողություններ, դպրոցում կազմակերպվել են տարբեր բնույթի նպատակային միջոցառումներ՝ առարկայական, արտադասարանական, արտադպրոցական, որոնք կներկայացվեն ստորև:

ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

1. <<Կրթությունն է երկրի կորիզը>> (լավագույն տասնյակ)
    1. Հարությունյան Էրիկ - VIգ
    2. Մինասյան Մերի - VII դ (II մրցանակ)

2. <<Մարզպետի գավաթ>>- խճուղավազք

Արմինե Վարդանյան- IXա (վազք 2կմ, 2-րդ տեղ,25000 դրամ պարգևավճար)

3. Կոտայքի մարզի դպրոցականների մ-12տ. մրցաշար /ֆուտբոլ/, եզրափակիչ փուլ, 2-րդ տեղ, հանրապետական փուլի ուղեգիր

4. Շնորհակալագիր <<ԴԵՎԵԼՕՓ ԱՐՄԵՆԻԱ>> ՀԿ-ի կողմից

5. << Ֆրանսիական աքաղաղ>> II փուլ, 5 տեղ / VIIIա/

Հարությունյան Արինա

Յարոյան Անահիտ /պատվոգիր/

Գրիգորյան Նարե

Խաչատրյան Էլեն

Ավետիսյան Արմինե

6. Առարկայական օլիմպիադա

Մարզային փուլ - 13 աշակերտ

Հանրապետական փուլ- 1. Այվազյան Գարիկ/քիմիա, ռուսաց լեզու/

2.Ամյան Արթուր /աշխարհագրություն/

7. Հարությունյան Անի – IVդ <<Կենգուրու>> լավագույն մրցանակ

8. Հնգամարտ , հաջող հանդես եկան 2 աշակերտ՝ Վարդանյան Արմինե (IXբ),Գրիգորյան Նորայր (IXա), ընդգրկվել են մարզի հավաքական

9. Հեռացատկ տեղից – հանրապետությունում լավագույն արդյունք (Նորայր Գրիգորյան)

10. ՀՀ դպրոցականների շախմատի 17-րդ օլիմպիադա, տարածքային փուլ 1-ին տեղ

1.Լիտվինով Ալեն- VIդ

2. Թավաքալյան Խաչատուր – VIIIբ

3. Թավաքալյան Անի- VIգ

4. Մարգարյան Արգիշտի- VII գ

ԲԱՑ ԴԱՍԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. <<Թող հավերժ ողողանջեն զանգերը>>-միջոցառում նվիրված սեպտեմբերի 1-ին

2. <<Մենք հպարտ ենք մեր գիտելիքով>>- Գիտելիքի օր / 1.09.2022թ./

3. <<Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ>> - միջոցառումներ նվիրված ուսուցչի օրվան /5.10.2022թ./
4. <<Թող հայոց Այբ-ը համայն աշխարհին խաղաղություն պարգևի>> խորագրով Ա(ա)հնչյուն –տառի ուսուցման դասաժամեր I դասարաններում
5. << Գույների իմ աշխարհը>> անհատական ցուցահանդես (նկարչություն) /Միլենա Ավետիսյան-Vա Ա.Իսրայելյան /
6. <<Սպանված աղավնի>>- գրքի քննարկում դպրոցի գրադարանում /VIIIբ դաս., 17.11.22թ./
7. <<Վերջին ուսուցիչը>> գրքի քննարկում / VIII- IX դաս. , 7.10.22թ./
8. <<Տեառընդառաջի խորհուրդը>>2 մասից բաղկացած միջոցառում (բակ, դասարան) /Vգ դասարան, Հ.Զոհրաբյան/ 13.02.23թ./
9. <<Համբարձման տոն>>- միջոցառում / V դասարաններ/
10. Մայրենիի միջազգային օրվան նվիրված՝
    ա. <<Բառբառը մեր հարստությունն է>> (մրցույթային բեմականացում, Մ.Մկրտչյան)
    բ. <<Մայրենին ամենուր է>> շրջագայություն բոլոր դասարաններում: Եռատոն՝ Թումանյան, գրքի նվիրում, մայրենի...
    գ. Դաս-միջոցառում <<Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է>> խորագրով (Vա դասարան , Ա.Ղուկասյան)
    դ.<<Գրից մինչև ազգ և միասնություն>> բազմաբովանդակ միջոցառում (IV ադասարան, Կ.Ահարոնյան)
11. <<Գիտելիքը ուժ է>> ինտելեկտուալ խաղ-վիկտորինա (Հ.Անանյան IX ա, բ, գ, մաթեմատիկա , բնագիտական առարկաներ)
12. <<Ֆրանսիական աքաղաղ>> ֆրանսերենի միջազգային մրցույթ /31 աշակերտ, 21.02.23թ./
13. <<Իմ հեռու, իմ մոտիկ, իմ սուրբ Հայաստան>> (հայրենասիրական միջոցառում, IVգդասարան, Կ.Հովհաննիսյան)
14. Օդային տանգնապ - ԱԻՆ-ի աշխատակիցների մասնակցությամբ 13.04.23թ.
15. Քննչական կոմիտեի ներկայացուցիչների հետ դաս - հանդիպում(IXա ,IXբ)
16. <<Մեր գրի ուժը պայմանավորված է նաև Մատենադարանով>>(Iա Հ.Խառատյան)
17. <<Խաղաղության թևով ճախրիր մեր ոսկեատառ Այբբենարան>> (Լ.Հարությունյան)

18. ՀՀ Կոտայի մարզի ոստիկանության անչափահասների տեսչության աշխատակիցների հանդիպումը տարբեր դասարանների աշակերտների հետ
19. <<Կռունկ, ուստի՞ կուգաս>>- Ի խորոց սրտի Կոմիտասի և Մեծ եղեռնի զոհերի հիշատակի: Դաս –միջոցառում , ցուցահանդես-միջոցառում (Հ.Զոհրաբյան, VIIդաս.<<Կոմիտաս>> թեմայի ամփոփիչ դաս)
20. <<Մենք գենն ենք հայի>> ավարտական համազարկ (Ա.Եղիազարյան IVդ դասարան)
21. <<Դասը վարում է ոստիկանը>>28.04.23թ.
22. <<Այբն է մայրն իմաստության>>28.04.23թ.(Թ.Վիրաբյան)
23. <<Հայրենասիրությունը ծնվում է մայրական կաթից>> ասմունքի մրցույթ(մարտ –ապրիլ, I-IVդդ, V-IXդդ.)
24. <<Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվելու>> թեմայով ասմունքի մրցույթ/ռուսերեն/
25. <<Գիքորը>>բեմադրություն-VIIբ դասարան (Ք.Ավետիսյան)
26. Տեխնոլոգիայի դասաժամ երկրագիտական թանգարանում (Iգ դասարան,Թ.Վիրաբյան,12.05.2023թ.):

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ

1. <<Քո արվեստը դպրոցում>> ծրագիր 23.09.22թ. (Հ.Զոհրաբյան)
2. <<Տարվա լավագույնները>> մրցույթ՝ հայտարարված ԿԳՍՄ նախարարության կողմից (Էլ. Հարությունյան, Հ.Զոհրաբյան)
3. <<Կորիզ 2022 >> համադպրոցական մրցույթ
4. << Օրբելի եղբայրների կյանքն ու գործունեությունը>>միջհամայնքային օլիմպիադա(VII-IX դասարաններ, 11.10-18.10.22թ.)
5. ՀՀ ԿԳՍՄ նախարարության և ՀԱՊ-ի կողմից կազմակերպված <<ԴասԱրվեստ.բեմանկարչության արվեստը>> ուսուցողական և ճանաչողական միջոցառում 28.09.22թ./30-ից ավելի աշակերտ/
6. Կոնարդ Ադենաուեր հիմնադրամի և ՀՀ ԿԳՍՄ նախարարության համատեղ կազմակերպած<<Հասարակագիտություն>> առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթաց (26.09-28.09, Ա.Մարգարյան)

7. Կոտայքի մարզային գրադարան՝ հանդիպում Վահագ Ռաշի հետ(VII ա դաս., 07.10.22թ.)
8. <<Թանգարանը դպրոցում>> ծրագիր , դաս – միջոցառում 6-րդ դասարանցիների մասնակցությամբ: Դաս- միջոցառումը վարեցին Հայաստանի պատմության թանգարանի աշխատակիցները:
9. <<Ռուսաց լեզվի և գրականության դասավանդման ժամանակակից մոտեցումները>> դասընթաց (Լ.Մինասյան)
10. <<Փրկության կափարիչ>> դաս-միջոցառում,շարունակական ծրագիր
11. Կոտայքի մարզային գրադարան- Հանդիպում հեղինակի հետ,Կարեն Ադամյան <<Սեր և անմահություն>>(VII գ դասարան, Էլ. Հարությունյան)
12. <<Ինտերնետ հասարակության Հայաստան հատված,ՅՈՒՆԻՍԵՖ- մասնակցություն <<Ինֆորմացիոն տեխնոլոգիաները գործնականում>> ծրագրի շրջանակներում սարքավորումների կիրառման և նախագծման դասընթացին (հունվարի29-ից ապրիլի 29-ը)
13. Հանդիպում ԵՊՀ բանասիրական ամբիոնի դասախոս Նվարդ Վարդանյանի հետ.<<Սասնա ծռեր.խորհրդանիշներ>>
14. <<Հայրենասիրությունը սկսվում է մայրական կաթից>> ասմունքի մրցույթ. տարրական դպրոց -21.03.23թ., հիմնական դպրոց- 24.03.23թ.
15. Թումանյանական օլիմպիադա /25.03.23թ./
16. Մասնակցություն <<Լիվըր>>ընկերության հետ համատեղ հայտարարված գեղարվեստական թարգմանության մրցույթին՝ նվիրված Վ.Բրյուսովի 150-ամյակին
17. <<Ֆրանսիական աքաղաղ >> մրցույթ /մարտ/
18. <<Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն>> ՀԿ-ի կողմից անցկացվող <<Դիջիկոդ>> կիրառական ծրագրավորման 8-րդ պատանեկան մրցույթ /մարզային փուլ/ Վարդան Վարդանյան, հեռավար մասնակցություն/
19. <<Կորիզ 2023>>կրթական մարտահրավերին՝ պատրաստելով տեսահոլովակ /Գ.Հակոբյան, մարտ/
20. <<Երեխաների առցանց անվտանգության վերաբերյալ հարցում>>-ին <<Հայաստանի օպերատորների միություն>> ՀԿ-ի կողմից կազմակերպված (Գ.Հակոբյան,VII դասարան)

21. ԳԹԿ-ի կողմից Teams ծրագիր – IV[ա] ,IV[գ] դասարաններ (2.05.2023թ.)
22. ՆԳ նախարարության ՓԾ Կոտայքի ՄՓՎ Հրաղդանի հրշեջ փրկարարական ջոկատի կողմից անցկացված վարժանքև դասխոսություն՝<<Երկրաշարժ>>թեմայով/3.05.2023թ./
23. <<Ոսկե սրինգ>> -Երևանի մանկական ֆիլհարմոնիկ դահլիճում կայացած մրցույթ փառատոնին մասնակցել են մի խումբ աշակերտներ, ցուցաբերել լավագույն արդյունք

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ

1.Բնագիտական մասնախումբ

- Հ. Անանյան -<<Մաթեմատիկան և ռուսաց լեզուն>>միջառարկայական կապը
- Ք.Ավետիսյան-<<50 հետաքրքիր փաստ Պյութագորասի կյանքից>> և <<Մաթեմատիկան և բնությունը>>
- Փ.Բաղալյան -<< Հետաքրքիր փաստեր երազների մասին>>
- Ս.Սարգսյան - << Համակարգիչ>>
- Գ.Հակոբյան - << Կյանքի յոթ շախմատային կանոնները>>

2.Օտար լեզվի մասնախումբ

- Ա.Գարեգինյան - << 20-րդ դարի ժամանակակից անգլերեն պոեզիա>>
- Լ.Ենոքյան - <<Աշակերտի անձնային որակների ձևավորումը և զարգացումը հեքիաթների միջոցով 5-րդ դասարանում>>
- Ն.Խաչատրյան- << Աութենիտիկ նյութերի կիրառումը հաղորդակցական նպատակներով>>
- Լ.Մինասյան- << <<Ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները որպես օտար լեզու>>
- Տ.Խաչատրյան- <<Շրջված դասարան>>
- Ն.Այվազյան- < Թարգմանության դերը ժամանակակից ռուսաց լեզվում>>

3.Գեղագիտական և ռազմահայրենասիրական մասնախումբ

- Ա.Իսրաելյան - <<Ի՞նչ է բուլինգը>>
- Հ.Զոհրաբյան-<<Ինչպե՞ս սովորողի մոտ ձևավորել ազգային արժեքները, ազգային երգ ու պար, երաժշտություն առարկաների դասավանդման ընթացքում>>:

4.Տարական մասնախումբ

- ,Բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում / Մ.Սաֆարյան/
- ,Միջառարկայական կապերի հաստատումը մայրենիի դասավանդման գործընթացումե / Ն.Շաբոյան/
- ,Սովորողների մեջ ընթերցանության խթանումն ու զարգացումը տարրական դասարաններումե/Լ.Հարությունյան/
- ,Խաղը կրտսեր դպրոցումե /Դ.Մկրտչյան/
- ,Խաղային տեխնոլոգիաների դերը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ե /Ա.Նազարյան/

5.Հումանիտար մասնախումբ

- Հ.Սարտգսյան- <<Դաստիարակության տեսակները>> ըստ բովանդակության
- Ա.Մարգարյան-<<Նախագծային մեթոդի բովանդակությունը և տեսակները>>
- Ա.Ղուկասյան-<<Բուլլինգը դպրոցում>>
- Մ.Մկրտչյան-<<Պատիժը որպես հետևանքների արվեստ>>

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2023 - 2024 ուստարում էլ ավելի բարձրացնել ուսուցման մակարդակը՝ կրթության որակի հիմքը դարձնելով աշակերտների կարողունակության՝ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի, արժեքների համակարգի և ակնկալվող վերջնարդյունքի ապահովումը՝ ըստ կրթական աստիճանների:

Ճիշտ ընկալել հիմնական դպրոցի կարևորությունը և կատարել նրա առջև դրված պահանջները:

IX դասարանում կրթությունը նպատակաուղղել ավագ դպրոցում ուսումը ճիշտ հոսքում շարունակելու համար անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Դպրոցում մեծ ուշադրություն դարձնել աշակերտների նախասիրություններին, արտադասարանական խմբակների ձևավորմանը:
Կարևորել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքները և սույն գործընթացը կազմակերպել պահանջվող նորմերին համապատասխան:

Ստեղծել երկարօրյա խմբակներ, աշակերտներին տալ սնունդ:
Շարունակել մասնակցությունը <Տաք սնունդ> ազգային ծրագրին:

Բոլոր ուսուցիչների համար պարտադիր դարձնել համակարգչային գիտելիքների շարունակական կատարելագործումը և այդ գիտելիքների կիրառումը դասապրոցեսին և ընդհանրապես ամբողջ գործընթացում:

Անհրաժեստություն դարձնել դպրոցի բոլոր ուսուցիչների կողմից համակարգչի, ինչպես նաև այլ տեխմիջոցների, սոցհարթակների հնարավորություններից արդյունավետ և նպատակային օգտվելը, հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդներին և միջոցներին, նախագծային աշխատանքի ձևերին,կազմակերպման ընթացքին տիրապետելը:

Ապահովել դպրոցի փոխտնօրենների, ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման ու վերաորակավորման առկա և հեռավար դասընթացներին և սեմինարներին:

Նպաստել ուսուցիչների մասնակցությանը ատեստավորման գործընթացին:
Ընդլայնել առարկայական օլիմպիադաներում տարբեր առարկաներից ունեցած հաջողությունների ու ձեռքբերումների ծավալը:

Ունենալ ժամանակակից պահանջներին բավարարող դասասենյակներ, համալրել դպրոցի համակարգիչները, դիդակտիկ նյութերն ու լաբորատոր սարքավորումները, վերանորոգել դասասենյակներ:

Դասասենյակները կահավորել նոր գույքով:

Ուշադրության կենտրոնում պահել համադպրոցական, առարկայական և արտադասարանական գեղարվեստական բոլոր միջոցառումները, հետևել դրանց բովանդակությանն ու կազմակերպական հարցերին:

Ձևավորել առողջ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Դպրոցի գործնեությունը կազմակերպել ՀՀ կառավարության,ԿԳՄՍ և առողջապահության նախարարությունների պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով հանրակրթությանը առնչվող օրենքները, նորմատիվ ակտերը, իրավական փաստաթղթերը, դպրոցի օրինակելի կանոնադրությունը, ՆՁՓ-ի պահանջները:

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	Դպրոցի դասարանները կոմպլեկտավորելու նպատակով ներկայացնել դասարանների և աշակերտների թիվը:	մինչև 03.09.2023թ.	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
2	Աշակերտներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոն-ներին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին և պարտակա-նություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար:	օգոստոս սեպտեմբեր	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
3	Պլանավորել մեթոդմիավորումների գործունեությունը:	օգոստոսի 25-31	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, առարկ.մաս. ղեկավարներ	
4	Առարկայական մասնախմբերում քննարկել և ամբողջական տեքստի բերել ուստարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:	25.08.2023-31.08.2023	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, առարկայական մասնախմբերի ղեկավարներ	
5	Անցկացնել մասնախմբերի ղեկավար-ների սեմինար խորհրդակցություն: Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:	25.08.2023-31.08.2023	տնօրենի տեղակալ ուս.աշխ. գծով	
6	Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած պատանիներին ու աղջիկներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ:	ուստարվա սկզբին	տնօրինություն, դասղեկներ, դասվարներ	
7	Ուսումնական տարվա սկզբից լրացնել ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյանը:	սեպտեմբեր – հունիս	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
8	Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	օգոստոս, սեպտեմբեր	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
9	Առարկայական մասնախմբերի ղեկավարների հետ անցկացնել հատուկ նիստ առարկայակն չափորոշիչներ ծրագրերում եղած փոփոխությունների, ծագած խնդիրների և սեմինար խորհրդակցություններում հնչած նորույթների մասին:	28.08. 2023թ. - 31.08.2023թ	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
10	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումներին, նորմատիվ փաստաթղթերին: Նպաստել կրթության ոլորտում կատարվող փոփոխությունների իրագեկմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
11	Մեթոդմիավորումների աշխատանքներին մասնակից դարձնել բոլոր ուսուցիչներին, մեթոդմիավորման ներսում ակտիվացնել նրանց գործունեությունը: Ավելացնել մեթոդական զեկուցումների ծավալը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ
12	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Հետևողական լինել թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների և ծրագրերի համապատասխանությանը:էլեկտրոնային մատյաններում դրանց տեղադրմանը:	04.09.2023թ.-15.09.2023թ	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
13	Ուսուցչի մեթոդական անկյունը հնարավորինս համալրել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	օգոստոս-սեպտեմբեր	տնօրենի տեղ. ուս. գծով, գրադարանի վարիչ, ԴԱԿ	
14	Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները և ներկայացնել տնօրենին՝ վավերացնելու:	04.09.2023-15.09.2023 15.01.2024-19.01.2024	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով,	
15	Համադպրոցական աշխատանքային պլանի և առարկայական մասնախմբերի ղեկավարների աշխատանքային պլանների,ինչպես նաև լրացուցիչ հանձնարարականների հիման վրա դպրոցի ամենամսյա աշխատանքային պլանի կազմում:	յուրաքանչյուր ամիս	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
16	Դպրոցի ամենամսյա պլաններում արտացոլել սովորողների գիտելիքների, կարողությունների , հմտությունների ձեռքբերմանը, դիրքորոշման արտահայտմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնությունը և դրանց իրականացման արդյունավետությունը:	յուրաքանչյուր ամիս	տնօրենի տեղակալ ուս. աշխ. գծով	
17	Հնարավորության սահմաններում նպաստել սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով և գրենական այլ պիտույքներով օգնելու գործընթացին:	սեպտեմբեր	տնօրենություն, դասղեկներ, ծնողական խորհուրդ	
18	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ սիրով հաճախի դպրոց և «Ես սիրում եմ իմ դպրոցը» նշանաբանը դառնա իրական	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
19	Ստեղծել դիտողությունների և առաջարկությունների գրանցման մատյան:	սեպտեմբեր	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
20	Նպաստել ուսուցման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ զարգացնելով դպրոցի նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազան:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
21	Հասնել նրան, որ յուրաքանչյուր աշակերտ զգա, որ ինքը ոչ միայն հայրենիքի, այլ նաև հայոց բանակի մի մասնիկն է, մի կաթիլը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ
22	Ապահովել ուսուցիչների ընդգրկվա-ծությունը վերապատրաստման, վերաորակավորման դասընթացներին (ըստ պահանջի): Նպաստել ուսուցիչների ատեստավորման գործընթացին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
23	Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը առցանց, հեռավար կազմակերպվող առարկայական, մեթոդական, մեթոդահոգեբանական սեմինարներին ու դասապրոցեսներին, կամավոր ատեստավորմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
24	Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկա-վարժներին:Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ-աշակերտ հարաբերությանը, նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը աշակերտակենտրոն, ինչպես նաև համակարգչային կաբինետում անցկացվող դասերին	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով,	
25	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը մարզում կազմակերպվող մանկավարժական սեմինարներին, մանկավարժական խնդիրներին առնչվող միջոցառումներին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
26	Ավելացնել համայնքային, մարզային, հանրապետական առարկայական մրցույթներին, միջոցառումներին մասնակցող սովորողների և ուսուցիչների թիվը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
27	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին, նոր կրթակարգի խնդիրներին և ՆՉՓ-ով ամրագրված պահանջներին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով մաս. ղեկավ.	
28	Դպրոցում կազմակերպել մանկավարժությանը և տարիքային հոգեբանությանը, աշակերտների սոցիալականացմանը առնչվող հարցերի պարզաբանումներին նվիրված խորհրդակցություններ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
29	Կազմակերպել մանկավարժական խորհրդատվական աշխատանքներ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
30	Նպաստել դպրոցի ներքին գնահատման գործառույթների իրականացմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
31	Կազմել դպրոցի՝ 2023-2024 ուստարվա կատարած աշխատանքների, ձեռքբերումների և հաջողությունների ամբողջական հաշվետվությունը՝ աշխատանքների մեջ ընդգրկելով ուսուցիչներին, դասղեկներին:	մայիս - հունիս	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով դասղեկներ, ուսուցիչներ	
32	Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ և երիտասարդ ուսուցիչների աշխատանքային գործընթացը, ստուգել օրվա դասերի պլան - կոնսպեկտները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
33	Իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցմանն ուղղված համապատասխան գործառույթները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
34	Ուսուցիչներին ընդգրկել մանկավարժական, հետազոտական, նախագծային աշխատանքներում:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
35	Նպաստել մանկավարժահոգեբանական ծառայությունների որակի բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
36	Հետևողական լինել դպրոցի կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
37	Կարևորել և ուշադրության կենտրոնում պահել դպրոցի անվտանգության և արտակարգ իրավիճակներին վերաբերող միջոցառումները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
38	Նպաստել դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի համար, անկախ սեռից , լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, կրթության համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմաններից, դպրոցը մատչելի ու հասանելի դարձնելուն	օգոստոս, սեպտեմբեր	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
39	Նպաստել ներառական կրթության ապահովմանն ուղղված աշխատանքներին	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
40	Պահանջել, որ յուրաքանչյուր ուսուցիչ տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական, մանկավարժական առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
41	Անցկացնել առարկայական մասնա-խմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Անհրաժեշտու-թյան դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխու-թյուններ:	ամիսը մեկ անգամ	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
42	Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի և մանկխորհրդի նիստերում	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
43	Կատարել նպատակային դասալսումներ համապատասխան քանակով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
44	Ստուգել տարբեր առարկաներից տրված թեմատիկ աշխատանքների քանակը և որակը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով մասն. ղեկավար	
45	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման մեթոդական ցուցումների , ինչպես նաև գնահատման տարբեր տեսակների կիրառումը: Ուշադրության կենտրոնում պահել բնութագրող գնահատման պահանջները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով մասն. ղեկավար ուսուցիչներ	
46	Հետևել ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտակենտրոն մոտեցման ապահովմանը՝ ուսուցման ավանդական և արդիական մեթոդների համադրմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
47	Կազմակերպել սկսնակ և երիտասարդ ուսուցիչների մեթոդական փորձի ձեռքբերման գործը, նրանց կցել որակյալ ուսուցիչների: Պահանջել գրել օրվա դասի պլանը և ներկայացնել ամենօրյա ստուգման և հաստատման:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
48	Ուստարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:	մշտապես	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
49	Հետևել, որ դասաժամերի բացթողումները բացի տոնական և հիշատակի ոչ աշխատանքային օրերի, լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:	մշտապես	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ
50	Ստուգել գործնական աշխատանքների կատարման վիճակը բոլոր առարկաներից	նոյեմբեր, ապրիլ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, մասնախմբի նախագահ	
51	Կազմակերպել գիտելիքների ստուգում(թեստային աշխատանք) 4-րդ դասարաններում:	ապրիլ	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
52	Ստուգել հանրակրթական ծրագրերի I աստիճանից (տարրական դպրոց) II աստիճան (միջին դպրոց) փոխադրված սովորողների առաջադիմությունը և նրանց հարմարվածության մակարդակը:	հոկտեմբեր 5-15	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
53	Հատուկ ուշադրություն դարձնել տարրական դասարանների ծրագրերի կատարմանը և դրանց յուրացման որակին:	դեկտեմբեր, մայիս	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, մասնախմբի նախագահ	
54	1.Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող աշակերտնե-րին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
	2. Հետևել ուսուցչի օգնականների, սոցմանկավարժի,հատուկ մանկավարժի և հոգեբանի աշխատանքային գործընթացին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
55	1.Բոլոր ստուգումների, ուսումնասիրու-թյունների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում, մանկխորհում կամ տնօրինության ընդլայնված նիստում:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
	2.Վերահսկել ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժների աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
56	Հայտնաբերել մտավոր օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով առարկայական մասնախմբի նախագահներ, ուսուցիչներ	
57	Գեղարվեստական կրթության և գեղարվեստական դաստիարակության միջոցոցով ապահովել աշակերտների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

58	Դասղեկներից պահանջել շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ՝ ըստ նախապես կազմված դասացուցակի, և լրացնել դասամատյանում:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, դասղեկներ	
59	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների (I և II կիսամյա-կում) կազմման,տնային աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները:	մշտապես	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
60	Ուստարվա ընթացքում կազմակերպել «Առողջության օր » միջոցառում: Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով:	ուստարվա ընթացքում	տնօրենի ուս.աշխ. և ՄԿԱ գծով տեղակալներ	
61	Պարբերաբար ստուգել թեմատիկ աշխատանքների տետրերը, գրավորների քանակը և գնահատման նորմերի պահպանումը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով	
62	Ապահովել աշակերտների ներգրավումը կրթական բարենպաստ վիճակի ստեղծմանը :	սեպտեմբեր, հունվար	տնօրինություն, դասղեկներ, ուսուցիչներ	
63	Նպաստել դպրոցական տարիքի յուրաքանչյուր աշակերտի համար՝ անկախ սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, դպրոցը մատչելի ու հասանելի դարձնելուն:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
64	Մասնախմբերի ղեկավարների օգնությամբ ուսումնասիրել հետևյալ առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել մեթոդմիավորման և մանկխորհրդի նիստերում. 1/ Մայրենի I- VI դդ. 2/ Հայոց լեզու VII - IX դդ. 3/ Հանրահաշիվ VIII - IX դդ. 4/ Ռուսաց լեզու IV - VII դդ. 5/ Կենսաբանություն VII - IX դդ. 6/Ինֆորմատիկա VII - IX դդ. 7 /Ֆիզիկա II- IV դդ.	 02.10-17.11 13.11-15.12 21.11-20.12 15.01-29.02 19.02-22.03 03.03-30.04 03.04-17.05	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
65	II – VI դդ աշակերտների՝ խնդիր լուծելու կարողությունների ստուգում	ապրիլ- մայիս		
66	Ուղագրական կարողությունների ստուգում տարրական դասարաններում	հոկտեմբեր-նոյեմբեր		
67	Կազմակերպել առարկայական շաբաթներ՝ մայրենի, հայոց լեզու, կենսաբանություն, ինֆորմատիկա առարկաներից:	հոկտեմբեր, նոյեմբեր-դեկտեմ. մարտ-ապրիլ	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, մաս. ղեկ.	
68	Անցկացնել դպրոցական առարկայական օլիմպիադա բոլոր առարկաներից	նոյեմբեր, դեկտեմբե, հունվար	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, հանձնաժողովներ	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար. մասին
69	Մասնախմբերի օգնությամբ ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման վիճակը:	դեկտեմբեր, ապրիլ	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, մասնախմբ. ղեկ.	
70	Ուսումնասիրել ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից պահանջվող գործնական աշխատանքի վիճակը :	նոյեմբեր- դեկտեմբեր մարտ-ապրիլ	տնօրենի տեղ. ուս. գծով	
71	Ուսումնասիրել աշակերտների (I – VI դդ) ընթերցանության տեխնիկայի վիճակը և քննարկել արդյունքները քննարկել համապատասխան մասնախմբերում	դեկտեմբեր, հունվար	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով	
72	Կազմակերպել և անցկացնել VI դաս-ի ընթերցանության օլիմպիադայի դպրոցական փուլը:	պահանջվող ժամկետում	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, մասնախմբ. ղեկ.,գրադարանի վարիչ	
73	Անցկացնել գրքերի քննարկումներ և ակտիվ ընթերցանության շաբաթներ:	նոյեմբեր, մարտ	տնօրենի տեղ. ուս. աշխ. գծով, մասնախ. ղեկ., գրադարանի վարիչ, հ.լ. և գրակ. ուսուց., դասվարներ	
74	Ավարտական դասարանների (IX) սովորողների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու և համապատասխան աշխատանք կազմակերպելու նպատակով թեմատիկ գրավոր աշխատանքներ անցկացնել տարբեր առարկաներից: Արդյունքները քննարկել մասնախմբերում:	դեկտեմբեր, ապրիլ/ մայիս	տնօրենի տեղ. ուս.աշխ. գծով, մասնախմբերի ղեկավարներներ	
75	IX դասարանում անցկացնել փորձնական քննություններ	15.05 -19.05.2023	տնօրենի տեղ. ուս. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
76	Տարեկան երկու անգամ ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին ու նորմերին:	հոկտեմբեր, ապրիլ	տնօրենի տեղ. ուս. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
77	Հետևել համակարգչային դասարանում տարբեր առարկաների պարապմունքներին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
78	Հետևել ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտական մոտեցման ապահովմանը՝ ուսուցման ավանդական և արդիական մեթոդների համադրմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	

20 N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
79	Հսկողություն սահմանել հետազոտական նախագծային աշխատանքներին	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
80	Ստուգել 9-րդ դասարանում հայոց լեզվից,ռուսաց լեզվից և մաթեմատիկայից տրվող թեմատիկ աշխատանքների քանակը և որակը, արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում:	կիսամյակների վերջում	տնօրենի տեղ. ուս. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
81	Վերահսկել էլեկտրոնային մատյանների գրանցումները, ուշադրության կենտրոնում պահել աշակերտների գնահատականները:	պարբերաբար	տնօրենի տեղ. ուս. գծով	
82	Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողովներ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	ուստարվա ընթացքում	տնօրենություն, դասղեկներ	
83	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման համար:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
84	Ստուգել ծրագրային նյութերի կատարողականը ուսումնական առարկաներից:	դեկտեմբեր մայիս	տնօրենի տեղ. ուս. գծով	
85	Օգնել սովորողին ճանաչելու ինքն իրեն, իր հայրենիքը, իր ժողովրդին, նրա ստեղծած հոգևոր և նյութական արժեքները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
86	Վերահսկել դժվարությամբ առաջադիմող և երկտարեցի աշակերտների հետ տարվող աշխատանքները: Արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցությունում:	դեկտեմբեր ապրիլ	տնօրենի տեղ. ուս. գծով	
87	Ապահովել ուսուցիչների աշխատանքը օլիմպիական աշակերտների հետ:	նոյեմբերն մարտ	տնօրենի տեղ. ուս. գծով	
88	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական և որոնողական աշխատանքների:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով, ուսուցիչներ	
89	Անցկացնել ընթերցանության օլիմպիադա VI դասարանում	ԿԳՍՄ նախարար. կողմից սահմանված ժամկետում	տնօրենի տեղ. ուս. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
90	Գրավոր աշխատանքի միջոցով ստուգել տարբեր դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչների նորմաներին:	Առարկաների դասավանդման վիճակի ուսումնասիրության համապատասխան	տնօրենի տեղ. ուս. գծով, մասնախմբերի ղեկավարներ	
91	Անցկացնել գիտելիքների գնահատման ակտիվ հաշվառման օրեր և շաբաթներ:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
92	Պարբերաբար ստուգել ուսուցիչների պատրաստությունը դասերին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
93	Անցկացնել մեկօրյա դասալսումներ ցածր առաջադիմություն ունեցող դասարաններում:	նոյեմբեր, մարտ	տնօրենի տեղ. ուս. գծով	
94	Ծնողական ժողովների ժամանակ հանդես գալ ուսումնադաստիարակ-չական հարցերին առնչվող թեմաներով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
95	Վերահսկել և ուշադրության կենտրոնում պահել բոլոր առարկայական միջոցառումները, բաց դասերը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
	ա/ VIII և IX դասարաններում անցկացնել բանավեճեր տարբեր թեմաներով:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով, հոգեբան	
	բ/ «Սիրենք պոետի գույները» գրական – նկարչական մրցույթ	մարտ-ապրիլ	տնօրենի տեղ. ուս. գծով, նկարչության և մայրենիի ուսուցիչներ	
	գ/«Մենք շախմատի ապագա արքաներն ենք» շախմատի մրցույթ II –III դասարաններում	ապրիլի 25-30	տնօրենի տեղ. ուս. գծով, շախմատի ուսուցչուհի	
96	Երաժշտաստեղծ մտածողության զարգացման նպատակով անցկացնել բաց դասե ր I – VI դասարաններում Երաժշտություն առարկայից, V դասարանում Ազգային երգ ու պար առարկայից:	ապրիլ-մայիս	տնօրենի տեղ. ուս. գծով	
97	Հումանիտար և գեղագիտական առարկայական մասնախմբերի անդամների հետ «Գեղագիտական իմացությունը վեր է ամեն ինչից» թեմայով սեմինար խորհրդակցության կազմակերպում:	հոկտեմբեր, նոյեմբեր	տնօրենի տեղ. ուս. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
98	Սոցիալական հասարակության հմտությունների ձևավորման նպատակով հասարակագիտության ժամերին հնարավորինս ապահովել տեղական և մարզային օրենսդիր իշխանության ներկայացուցիչների մասնակցությունը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
99	Առարկայական մասնախմբերում մանկավարժական մեթոդների տեսության վերաբերյալ հարցերի քննարկում(սեմինար պարապմունք:	մարտ- ապրիլ	տնօրենի տեղ. ուս. գծով	
100	Ստուգել ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովումը ռազմագիտության, գրականության, պատմության դասաժամերին:	դեկտեմբեր, ապրիլ	տնօրեն, տնօրենի տեղ. ուս. գծով	
101	Վերահսկել «Դաշտային աշխատանք կամ էքսկուրսիա » մեթոդի կիրառման ապահովումը Հայաստանի աշխարհագրության ժամերին:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
102	Աշակերտների արժեքային համակարգի ստուգում « Ես հայ եմ, իմ հայրենիքը Հայաստանն է» խորագրով շարադրության միջոցով:	փետրվար- մարտ	տնօրենի տեղ. ուս. գծով	
103	Պատմական հուշարձանների խնամքն ու բարեկարգումը դարձնել ամեն աշակերտի բարոյական կերպարի անքակտելի մաս և հայրենադսիրության դրսևորման բանաձև:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
104	Պատմական հուշարձանների խնամքն ու բարեկարգումը դարձնել արտադասարանական աշխատանքի մաս	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
105	Խիստ վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմաբ, ժամանակին կանխել դրանք:	ուստարվա ընթացքում	տնօրինություն, դասղեկներ, դասվարներ, ՄԿԿ	
106	Հատուկ վերաբերմունք դրսևորել սկսնակ և երիտասարդ ուսուցիչների նկատմամբ, օժանդակել և օգնել նրանց կազմակերպելու վստահված աշխատանքները:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
107	Նպաստել IX դասարանի աշակերտների ուսումը ավագ դպրոցի ճիշտ հոսքում շարունակելու կողմնորոշմանը:	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
108	Աջակցել Հայոց բանակի օրվան նվիրված համադպրոցական միջոցառման կազմակերպմանն ու աջակցմանը:	26.01 .2023թ- 28.01.2023թ	տնօրենի տեղ. ուս. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
109	Աջակցել " Ռոբոտաշինություն " խմբակի աշխատանքների կազմակերպմանն ու կայացմանը	սեպտեմբեր	տնօրենություն	
110	Ուշադրության կենտրոնում պահել ֆիզկուլտուրայի պարապմունքների ժամանակ պահանջվող նորմաների կատարումը	ուստարվա ընթացքում	տնօրենի տեղ. ուս. գծով	
111	Լուրջ ուշադրություն դարձնել մայրենի լեզվի ուսուցմանը ա / անցկացնել հայոց լեզվի և գրականության առարկայական շաբաթներ բ / կազմակերպել գրական երաժշտական ցերեկույթներ և երեկոներ (VIII և IX դաս.) գ / «Հավերժական ճամփորդ մեր մայրենին» թեմայով բաց դասեր բոլոր դասարաններում:	ուստարվա ընթացքում 21.02.2024թ.	տնօրենի տեղ. ուս. գծով	
112	Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար, կազմել ժամանակացույց:	մայիս	տնօրենի տեղ. ուս. գծով	
113	Ժամանակին կազմել և հաստատել քննական ստուգող և առարկայա-կան հանձնաժողովները, վերահսկողների և հերթապահների կազմը: Քննական կարգացուցակը (ժամանակացույցը) փակցնել պահանջվող ժամկետում:	մայիս	տնօրեն, տնօրենի տեղ. ուս. գծով	
114	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի բաշխման վերաբերյալ քնարկումների առաջարկությունների ներկայացնում:	հունիս	տնօրենի տեղ. ուս. գծով, առարկայական մասնախումբի ղեկավար	
115	Մասնակցել շրջակա մանկապարտեզների ավարտական հանդեսներին, ներկայացնել դպրոցի ձեռքբերումներն ու հաջողությունները:	հուլիս, օգոստոս	տնօրենի տեղ. ուս. գծով, դասվարներ	
116	Ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանք-ները և վերաքննությունները:	Պահանջվող կարգի համաձայն	տնօրենի տեղ. ուս. գծով	

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող անձ	Նշումներ կատար-ման մասին
117	Պահանջվող նորմերին համապատասխան դասացուցակի կազմում	25.08.2023-30.08.2023	տնօրենի տեղ. ուս. գծով	
118	Դասացուցակում անհրաժեշտ փոփոխության կատարում	25.12.2023-30.12.2023	տնօրենի տեղ. ուս. գծով	